



- ❶ Ալեքսանդրիայի փարոսը
- ❷ Քարելոնի կախված ալգիները
- ❸ Հոդոսի կոթողը

Կամսար ԱՎԵՏԻՍՅԱՆ

Յոթ հրաշալիքներից միայն Քեոփսի բուրգն էր, որ դիմացավ ժամանակի անողոք հարվածներին. մյուսները նրվազ դիմացկուն եղան: Բայց ժամանակակիցների և հետագա սերունդների նկարագրություններն այնքան ամբողջական ու մանրամասն են, որ հնարավոր է ոչ միայն նկարագրել դրանք, այլև վերականգնել բավական նշուրյամբ:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻՍՏԻ ՓՈՒՆՏՈՒՆՆԵՐԻ

Ալեքսանդրիային վիճակված էր մեր քվարկուրյանը նախորդող շոք դարերի բնրացում լինելու Միջերկրական ծովի վաճառական ֆաղափներից, նշանավոր նավահանգիստներից և ֆաղափակրության կենտրոններից մեկը:

332 թվականին (մ. թ. ա.) Ալեքսանդրը Մակեդոնացին նեղոսի դելտայում հիմնում է Ալեքսանդրիա ֆաղափը, որը և դառնում է եգիպտոսի մայրաքաղաքը՝ հելլենական գիտության ու կուլտուրայի, Արևելքի ու Եվրոպայի միջև կառաքվող առևտրի կենտրոնը: Ալեքսանդրիան իր ծաղկման շրջանում նույնիսկ բնակչությամբ (մեկ միլիոն մարդ) չէր զիջում անտիկ աշխարհի առաջին ֆաղափին՝ Հոմմին:

Սկզբը՝ նախորդ համառում:

Քաղաքը հատակագծել է հողոսցի հարաարապետ Գեյնոկրարը: Այն երկրաշափական նշուրյամբ բաժանված է եղել քաղերի և լայն փողոցների, որոնցից շատերն ունեցել են 30 մետր լայնություն:

Գլխավոր փողոցը համարվել է Քրոստեյոնը, որտեղ գտնվում էր համաշխարհային համրավ ունեցող Մուսեումը՝ «մուսանների տաճարը» (Ալեքսանդրիայի գրադարանն ու քանդաքանը):

Գնալով ալեկի է մեծանում Ալեքսանդրիայի փառքն ու փայլը. նրա աշխարհահռչակ գրադարանի շուրջն են հավաքվում երեկի գիտնականներ՝ բուսաբաններ, բժիշկներ, աստղագիտներ...

Շատ հրաշալի գործերի ու գյուտերի հետ է կապված Ալեքսանդրիայի անունը: Սակայն այդ հրաշալիքներից պատմության մեջ ամենից շատ մնացին նրա քանդաքանն ու փարոսը: Վերջինս դարձավ փառաբանված շինություններից մեկը և դասվեց «աշխարհի յոթ հրաշալիքների» շարքը: Փարոսի կառուցումն սկսվել է մ. թ. ա. երկուրդ դարի սկզբին՝ Պտղոմեոս քաղաքի օրոք, որին եգիպտոսը բաժին ընկավ Ալեքսանդր Մակեդոնացու մահ-

վանից հետո: Պողոմնոս քաղաքը որոշում է գիշերները մտեցող նավերի համար Ալեքսանդրիայի նավահանգիստն ավելի ապահով դարձնելու նպատակով կառուցել մի ուղեցույց աշտարակ:

Աշտարակի հիմքը դրվել է մեր բրվարկությունից 185 տարի առաջ, Փարոս կղզում, որը մոտ մեկ կիլոմետր երկարություն ունեցող ամբարտակով միացած էր հաղափին: Դա մի վիթխարի երկնամեք շեն է եղել, որն ամբողջապես կառուցված էր սպիտակ մարմարից: Աշտարակն ունեցել է 160 մետր բարձրություն, որի տեսանկյունից շտապիլը հասել է 80 կիլոմետրի:

Փարոսն ունեցել է երեք հարկ: Առաջին հարկը փռակուսու ձև է ունեցել, և ամեն մի պատի բարձրությունը հասել է 30 մետրի: Այդ պատերից յուրաքանչյուրն ուղղված է եղել դեպի աշխարհի չորս կողմերից մեկը: Երկրորդ հարկը ուրանկյուն է եղել: Դրանք ունեցել են մարմարյա երեսապատում և ծառայել են որպես գլխավոր կողմերի միջև բնկած երկրորդական կողմերի (հյուսիս-արևելք, հյուսիս-արևմուտք և այլն) օրինակներ:

Երրորդ հարկի գմբեթի տակ գիշերները լույս է վառվել: Նա ուղղություն է ավել ծովում մոլորված նավերին: Գմբեթը հենված է եղել գրանիտե հրղկված սյուների վրա: Փարոսի լույսն ուժեղացվել է մետաղյա հայելիներով և տարածվել շատ հեռու: Աշտարակի գրվիսին դրվել է ծովերի աստված Պոսեյդոնի յոթ մետրանոց արձանը:


Փարոսը ծառայել է նաև որպես ամրոց (ուր պահվել են զորամասեր) և

դիտակետ, որտեղից հսկել և հարկ եղած դեպքում օգնության են շտապել փրկության կարոտ նավերին:

Աշտարակը զարդարող բրոնզե արձաններից յուրաքանչյուրը մի հրաշալի է եղել: Նրանցից մի ֆանիսը ցույց են տվել արևի ընթացքը, մի ուրիշը յուրաքանչյուր ժամը մեկ զանգ է տրվել: Կար նաև այնպիսի արձանիկ, որի միջոցով անազանգում էին վտանգի մասին:

Ալեքսանդրիայի փարոսը եղել է անտիկ աշխարհի այն անկրկնելի կոթողներից մեկը, որն իր մեծությամբ և գեղեցկությամբ, ինչպես նաև հայելիների բարդությամբ և այլ հարմարանքներով տեսնողներին հրաշք է րվացել:

Փարոսի նախագծողն ու կառուցողը



Ալեքսանդրիայի փարոսը երկրպոստում:

նառաարայեա Սոսուրաւն է եղել, բայց թե կառուցողները չէին, որ պետք է անմահանային. պետք է քանդակվեր ոչ թե Սոսուրաւի, այլ բագավորի՝ Պողոսմեոս Յուրենցիացու անունը:

Այս անարդարութեան հետ Սոսուրաւը չի հաշտվում: Նա իր հեղինակային իրավունքները պահպանելու համար դիմում է մի շատ հետաքրքիր միջոցի: Մարմարի վրա քանդակում է. «Կինդացի Սոսուրաւն այս նվիրում է փրկարար աստվածներին ի սեր ծովագնացներին», հետո քանդակածը բարակ շերտով ձեփում և վրայից գրում է բագավորի անունը: Նա համոզված էր, որ ամենակարող ժամանակը ձեփը կպոկի և աշխարհին հայտնի կդարձնի իսկական ստեղծողի անունը: Այդպես էլ եղավ: Պատմությունը նաեւ շեց Ալեքսանդրիայի փարոսը կերտողի անունը:

Հին աշխարհում կառուցված փարոսներից և ոչ մէկը իր մեծությամբ ու զեղեցկությամբ չէր կարող մրցել Ալեքսանդրիայի փարոսի հետ: Կորոզը կանգուն մնաց մոտ յոթ հարյուր տարի: Տասնչորսերորդ դարում երկրաշարժը վերջնականապես այն կործանեց:

Ալեքսանդրիայի նավահանգիստը ներկայումս ունի մի այլ փարոս, որը նույնպես գտնվում է Փարոս կղզու վրա, նրա արևմտյան մասում: Սակայն նա շատ բանով է զիջում իր նախորդին՝ Ալեքսանդրիայի փարոսին:

ԲԱՐԵԼՈՆԻ ԿԱՄ ՇԱՄԻՐԱՄԻ
ԿԱՆՎԱՄ ԱՅԳԻՆԵՐԸ


Այգիները գտնվել են Բաբելոն քաղաքում: Սա եղել է հին աշխարհի երեւելի քաղաքներից մէկը և Բաբելոնիայի կամ Քաղդեայի մայրաքաղաքը: Նրա ավերակները հայտնաբերվել են Միջագետքում Եփրատի ափին:

Միջագետքում իշխել են բաւժը կուլտուրայի տեր Հին աշխարհի երկու խոշոր ազգ՝ բաբելոնացիները և ասորեստանցիները: Բայց նրանք էլ հին Եգիպտացիների նման հեռացել են համաշխարհային բաւերարեմից: Այսօր ո՛չ Բաբելոն կա և ոչ էլ Ասորեստան. նրանց մասին մենք իմանում ենք հնուց մեզ հասած պատմական տեղեկությունների և հնագիտական պեղումների միջոցով: Գրանք մեզ շատ բան են ասում Բաբելոնի անցյալի, կախովի այգիների և անգամ վերջինների տեղի մասին:

Ըստ ավանդության, այգիները տրեկվել են Շամիրամ բագունու համար, որը եկել էր զով երկրից՝ Ասորեստանից: Արհան, ցանկանալով մեղմել բագունու կարոտն իր զովասուն և անտառներով հարուստ հայրենիքի հանդեպ, տորակեց և անտառագուրկ Բաբելոնում ստեղծել է հազվագյուտ ծառերի ու ծաղիկների մի սխանչելի օազիս:

Այգիները անել են միջնաբերդում և վեր բարձրացել ամֆիթատրոնի տեսքով՝ հարկ առ հարկ: 50 մետրանոց բագմաքիվ սյուներ իրենց ուսերին են պահել այդ հրաշք-այգին: Այգիները հասել են մինչև 250 մետր բարձրության: Գարավանդների վրա այնքան պարարտ հող է լցվել, որ հզոր ծառերը խոր արմատներ են գցել: Այգու ծառուղիների շարքում եղել են պուրակներ, ուր անել են դափնիներ և մրտենիներ: Ամենուրեք արևադարձային ծաղկաքմբեր են եղել:

Բաբելոնի անցյալ փառքի մասին մեզ պատմում են նառաարայեաական հուշարձանները և հույն պատմաբան Հերոդոտը: Բաբելոնի վերաբերյալ եղած տեղեկությունները լրացվեցին 1899—1914 թվականների բերքացում կատարված պեղումներով: Պարզվեց,



Շամիրամ քաղաճու կախված այգիները Բարեխոնոմ:

որ քաղաքն ունեցել է քառակուսի ձև և պարսպապատ է եղել: Գարպասի ամեն մի կողմի երկարությունը հասել է 22 կիլոմետրի, բարձրությունը՝ 250 մետրի:

Պակաս հրաշալիք չեն եղել քաղաքի հսկայական պարիսպները, ինչպես նաև հույակապ պալատները, գեղեցիկ շենքերը, տանաքները, այդ քվում Մարդուկ աստծուն նվիրված տանաքը. դեպի այն տանող Սրբազան փողոցը համարվել է քաղաքի հիմնական կոմպոզիցիոն առանցքը: Նշանավոր է եղել նաև պաշտամունքի նպատակով կառուցված 91 մետր բարձրություն ունեցող աշտարակը, որը և ընկավ Բիբլիականի «Բարեխոնի աշտարակի» ավանդության հիմքում:

Բարեխոնն իր ծաղկման զազաքնակեաին հասավ հատկապես մեր քվարկությունից երկու հազար տարի առաջ և դարձավ ոչ միայն Միջագետքի, այլև իր ժամանակի կոլտուրական կենտրոնը:

Մ. ք. ա. 323 քվականին Բարեխոնը նվաճում է Ալեքսանդր Մակեդոնացին

և դարձնում իր կայսրության մայրաքաղաքը: Նրա մահից հետո Բարեխոնն աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը և վերջնականապես կործանվում մեր քվարկությունից երկու դար առաջ: Թեև ժամանակի ընթացքում Բարեխոնը կործանվեց և հողին հավասարեցվեց, բայց պատմությունը մեզ շատ բան հասցրեց նրա մասին: Իսկ 1899—1914 քվականների ընթացքում կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին քաղաքի ավերակները: Գտնվեց նաև հուշակավոր կախովի այգիների տեղը: Դա եղել է, այսպես կոչված «Ներքին քաղաքի» մտտ, Եփրատի ձախ ափին:

Այո, ժամանակի հետ անցավ ոչ միայն Շամիրամ քաղաճու փառքը, այլև չորացան այգիները, լռեցին կարկաչուն շատրվանները, սերունդներին բողբոջում մի քանի նյութական լուռ վրկաներ և հմայիչ ավանդություններ: Բայց այդքանն էլ քվական է վերականգնելու համար մարդկային ստեղծարար աշխատանքի այդ հույակապ գործը և հիանալու նրանով:

Հայտնի է, որ հին եգիպտացիներն ու հույները իրենց աստվածների ու արևաների համար ֆանդակում էին վիքիսարի արձաններ, կարծես կամենալով այդ հսկա ֆանդակներում մարմնավորել նրանց մեծությունը:

Նման կորոզներին հույները կոլոսսուս էին անվանում: Այս բառը հունարենից անցել է շատ ժողովուրդների, այդ քվում և ռուսներին, բայց արդեն կոլոսս (КОЛОСС-հսկա, վիքիսարի) դարձած:

Այդպիսի հսկա արձաններից էր Հելլոս աստծու պատվին կերտված կորոզը Հողոս կղզում աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը: Արձանը կրում է կղզու անունը:

Հողոս կղզին գտնվում է էգեյան ծովի հարավ-արևելյան մասում՝ Փոքր Ասիա քերակղզու ավերից մոտ 30 կիլոմետր հեռավորության վրա: Կղզին ունի մեղմ և առողջարար կլիմա, ջինջ երկինք, հարուստ բուսականություն: Կղզու բռնած տարածությունն է 1404 հառակուսի կիլոմետր, այնքան, որքան մեր Սևանն է: Հողոսը ներկայումս պատկանում է Հունաստանին:

Կղզին իր ժամանակին եղել է ծովային առևտրի ճանապարհների խաչմերուկը, Միջերկրածովային աշխարհի երևելի երկրների՝ եգիպտոսի, Փյունիկիայի և Սիրիայի հանգուցակետը: Հին աշխարհի այս նշանավոր կղզին իրականում անկախ պետություն էր: Կղզում կենտրոնացված հարստությունը մեծ չափով նպաստեց մայրաքաղաք Հողոսը արձաններով և այլ կորոզներով զարդարելու գործին:

Կղզին եղել է Անտիկ աշխարհի ֆաղափարության օջախներից մեկը, ունեցել իր մշակույթը, որը կրել է Հողոսյան մշակույթ անունը: Մեծ հռչակ

էր վայելում հողոսյան ֆանդակագործությունը:

Հողոսյան ֆանդակագործներն իրենց գործերում զարմանալի վարպետությամբ են կերտել մարդկային մարմնի գեղեցկությունը՝ ցուցաբերելով անատոմիական բարդ գիտելիքներ:

Այդպիսի ֆանդակների քվին է պատկանում Լաոկոոնի հռչակավոր արձանախումբը: Քայց բոլոր ֆանդակներից ամենահայակապը եղավ Հելլոսի արձանը, որը դասվեց «յոթ հրաշալիքների» շարքին: Այն կանգնեցված էր Հողոս կղզում գանձող և Հողոս անունը կրող նավահանգստի մուտքի մոտ: Հողոսացիների կյանքը շատ բանով էր կապված ծովային առևտրի և նավագնացության հետ: Խրանք հռչակված էին որպես լավ նավագնացներ:

Հողոսացիները խաղաղասեր մարդիկ են եղել, բայց և շատ լավ են կազմակերպել իրենց կղզու պաշտպանությունը: Դրա շնորհիվ նրանք պարտության են մատնում եգիպտական բանակին, որը հարձակվել էր Հողոսի վրա: Հողոսացիների պաշտպանությունը Հին աշխարհի պատմության ամենահետաքրքիր կան էջերից մեկն է: Պարտվելով, եգիպտացիները մեծ ավար են քողնում հողոսացիներին: Ի հավերժացումն իրենց կղզու ազատության, խաղաղասեր հողոսացիները որոշում են եգիպտացիների քողած ավարով կառուցել մի վիքիսարի արձան՝ նվիրված Հելլոս աստծուն: Այն հետագայում հայտնի դարձավ Հողոսյան կորոզ կամ ուղղակի Հողոսյան Կոլոսս անվամբ:


Արձանի կառուցումը սկսվել է մեր քվարկությունից երեք հարյուր տարի առաջ և ավարտվել 285 քվականին: Կորոզն ստեղծել են ֆանդակագործ Լիսիպոսը և նրա տաղանդավոր աշակերտ Խարեսը: Վերջինս ֆանդակագործության ասպարեզում բացառիկ հա-

չողությունների հասավ: Պատմում են, թե ինչպես կիսիպպը հետևելով Խաբեսի խանդավառ աշխատանքին՝ ուրախացած ասել է, որ շուտով Խաբեսը կը դառնա այնքան անվանի ֆանդակագործ, որ իրեն կկոչեն «մեծ վարպետի» ուսուցիչ:

Այս հույակապ կորոզը կանգուն մընաց մոտ 60 տարի: Մեր քվարկությունից 227 տարի առաջ Հոռոսում տեղի ունեցած մեծ երկրաշարժի հետևանքով արձանն ընկնում է իր տեղից և ավելի ֆան ինը հարյուր տարի մնում այդպես՝ պառկած վիճակում, շարունակելով հիացմունք պատճառել տեսնողներին: Ահա թե ինչ է գրում նրա մասին հոսմեացի գրող և գիտնական Պլինիոս Ավագը, որն այցելել է Հոռոս՝ կորոզի կործանումից ֆրեկ հարյուր տարի անց. «Քեև նա ընկած է վնասված վիճակում, բայց և այնպես ստիպում է զարմանալ իր հույակապությանը: Քիչ կգտնվեն մարդիկ, որ կարողանան երկու ձեռքով ընդգրկել նրա մեծ մարդ: Նրա մատները սովորական արձանից մեծ են: Իսկ կտարված խոռոչները կարծես թե ֆարաչը լինեն. ի դեպ տպավորությունն ավելի է ուժեղանում այդ խոռոչներում եղած գրանիտյա կոշտերով, որից օգտվելով կառուցողն իր ստեղծագործությանը կայունություն է հաղորդել»:

Յոթերորդ դարում, երբ Միջերկրական ծովում իշխող դարձան արաբները, արաբական մի գորավար արձանը որպես մետաղ (բրոնզ) վանառքի հանեց: Պատմում են, որ նա դարձավ ինը հարյուր ուղտի բեռ:

Հոռոս կղզում կատարած պեղում-



Հոռոսի մեծ արձանը համաժամ կղզում:

ների շնորհիվ հնագետները կարողացան վերականգնել արձանի տեսքը, նրա կառուցման բարդությունները. համոզվեցին որ նա իրավամբ դասվել է յոթ հրաշալիքների շարքը:

Հետաքրքրական է նշել, որ Հին աշխարհում Հոռոսյան կորոզի վրայով անցնող միջօրեականը համարվում էր առաջին կամ գլխավոր միջօրեականը: Դա ընդունեց նաև Պաղոմեոսը և հետագայում էլ արաբները: Սակայն 16-րդ դարում այն տեղափոխեցին Կանարյան կղզիներ, այս ֓արիգ, իսկ 1884 թվականից սկսած՝ Գրինվիչ:

(Վերջը հաջորդ համարում)